

բ/ Տիգրանակերտը կառուցվել է Ք. ա. 80-70-ական թթ. Աղձնիք նահանգում՝ Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակներից մեկի ափին:

գ/ Ք. ա. 68 թ. գարնանը Լուկուլլոսի բանակը դուրս է եկել Կոմմագենեից և անցնելով Հայկական Տավրոսը՝ Արածանի գետի ափերով շարժվել դեպի Արտաշատ:

դ/ Տիգրանակերտի ճակատամարտից հետո քաղաքը պաշտպանող օտար վարձկանները, կաշառվելով Պոմպեոսի կողմից, հոկտեմբերի վերջերին դարպասները բացել են հռոմեացիների առջև:

ե/ Ք. ա. 68 թ. սեպտեմբերի 22-ին հռոմեացիները մոտեցել են Արածանիի գետանցին, որից հետո Հայկական պար լեռնաշղթան էր, այնուհետև՝ Արտաշատը:

զ/ Արածանիի ճակատամարտից հետո Լուկուլլոսը ստիպված էր թողնել Հայաստանի սահմանները, Կորդոքն ու Կիլիկիան:

է/ Ք. ա. 89 թ. Միհրդատ Պոնտացին հայկական բանակով հարձակման է անցել հռոմեացիների դեմ և, գրավելով ամբողջ Փոքր Ասիան, պատերազմը տեղափոխել էվրոպական տարածք:

ը/ Խառանի ճակատամարտում հռոմեական բանակի սպանվածների թիվն անցնում էր 10 հազարից, իսկ գերիներինը՝ 20 հազարից:

թ/ Արտավազդը Անտոնինոսին տրամադրել էր 16 հազարանոց այրուձի:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Ռուսա 1-ինը շարունակել է Սարգուրի 3-րդի՝ պետության գերկենտրոնացման քաղաքականությունը:

բ/ Վանի թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:

գ/ Վանի թագավորությունում զինված ուժերի կորիզն արքունի մշտական զորաբանակն էր, որը խաղաղ պայմաններում տեղակայվում էր արքունական բերդերում, ամրոցներում և սահմանային զորանոցներում:

դ/ Վանի թագավորությունում զորքի գերագույն հրամանատարը երկու սպարապետներն էին:

ե/ Հմայապաշտությունը հավատն է գերբնական ուժերի միջոցով նյութական առարկաների, երևույթների և ընտանի կենդանիների վրա ազդելու մարդու ունակության նկատմամբ:

զ/ Վանի թագավորության նվաճած երկրներում իշխանությունը կարող էր թողնվել նախկին թագավորին կամ ցեղապետին, որը թեև հարկ չէր վճարում, սակայն պարտավորվում էր իր զորքով մասնակցել Վանի տիրակալի արշավանքներին:

է/ Կրոնական հնագույն պատկերացումներից էր ոգեպաշտությունը՝ ֆետիշիզմը:

ը/ Կրոնական հնագույն պատկերացումներից էր առարկայապաշտությունը՝ անիմիզմը:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Տեղեկանալով, որ Գրիգորը Տարոնում է, Տրդատ Մեծը, Աշխեն թագուհին, Խոսրովիդուխտը և հայոց զորքը գնում են նրան ընդառաջ, հասնում են Բագավան՝ Նպատ լեռան ստորոտը, և մեծ պատիվներով դիմավորում Տարոնից այնտեղ եկած կաթողիկոսին:

բ/ Սուրբ Գրիգորը, քրիստոնեության քարոզչությունը ծավալելով Հայաստանում, արևմուտքում հասցնում է Սատաղ քաղաքից մինչև Խաղտյաց երկիր՝ Կղարքքի մոտ, հյուսիսում՝ Ալանաց դռներ, արևելքում՝ Կասպից ծովի սահմաններ, հարավում՝ Կորդոք գավառ, Նոր Շիրական երկիր և Ատրպատական:

գ/ Գրիգոր Լուսավորիչը Տարոնում՝ Քարթե լեռան լանջին, դնում է Իննակնյա Ս. Կարապետ, Աշտիշատում՝ Ս. Երրորդություն եկեղեցիների հիմքերը:

դ/ Հայկական պետականությունը նախարարական համակարգի միջոցով պահպանվել է միայն զարգացած միջնադարում:

ե/ Հայաստանում հասարակական հարաբերությունները հնուց զարգանում էին համապետական՝ նախարարական հողատիրության պայմաններում:

զ/ Գանձագին հողերը պետական էին՝ ենթակա առուվաճառքի:

է/ Մեծ Հայքի թագավորության ժամանակաշրջանում գոյություն են ունեցել չորս բղեշխություն՝ Աղձնիքի, Կորդոքի, Նոր Շիրականի և Գուգարքի:

ը/ Ըստ «Սարգուրյան տարեգրության»՝ զինված ուժերի ընդհանուր թիվը շուրջ 350 000 էր:

թ/ Հայկազուն-Երվանդականները Հայաստանում թագավորի կարգավիճակով իշխել են մինչև 521 թ.:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.
Ք. ա. մուր 260 թ. Շամին հաջորդել է նրա որդի Արշամը, որը կառուցել է Արշամաշար քաղաքը Ծոփքում և Արսամեա անունով երկու քաղաք:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շար ավարով ու ցնձալի ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ ... քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շար ավարով»:

- ա. Ո՞վ է նշված խոսքերի հեղինակը:
- բ. Ի՞նչ իրադարձություն է նկարագրված մեջբերվող հատվածում (*պատասխանում պետք է նշվեն կոնկրետ անուն, գործողություն և վայր*):
- գ. Որտեղի՞ց էր վերադառնում հայոց թագավորը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ գլխավորությամբ են ասորեստանյան զորքերը Ք. ա. 8-րդ դարում գրավել Գազան. 0,5 մ.
 ա/ Սալմանասար III բ/ Սալմանասար I
 գ/ Թիգլաթպալասար III դ/ Սարգոն II
2. Ո՞վ է ազդարարել Աթենական պետության ժողովրդավարացման սկիզբը. 0,5 մ.
 ա/ Կլիսթենես բ/ Սոլոն
 գ/ Պիսիստրատ դ/ Օկտավիանոս
3. Ե՞րբ է տեղի ունեցել Իսթմոսի ճակատամարտը. 0,5 մ.
 ա/ Ք. ա. 146 թ. բ/ Ք. ա. 88 թ.
 գ/ Ք. ա. 171 թ. դ/ Ք. ա. 92 թ.
4. Ո՞վ է Գուպտաների պետությունը հասցրել հզորության գագաթնակետին. 0,5 մ.
 ա/ Չանդրագուպտա II բ/ Մագհադա
 գ/ Գուպտա III դ/ Գուպտա II
5. Ինչպե՞ս էր կոչվում հողային սեփականության առաջացման այն ձևը միջնադարյան Եվրոպայում, երբ թագավորը կամ խոշոր հողատերը ծառայության դիմաց հող էր շնորհում իրեն նվիրված մարդկանց: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
 1. Միհրդատ I 2. Յին Շի Հուանդ 3. Ու Դի 4. Լևոն I Մեծ պապ
 ա. Ք. ա. 246-210 թթ. բ. 440-461 թթ. գ. Ք. ա. 171-138 թթ. դ. Ք. ա. 140-87 թթ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
 ա/ Սպարտիատները պետության իրավահավասար քաղաքացիներ էին:
 բ/ Հելոտները դորիացիների կողմից նվաճված աքայացիներ էին:
 գ/ Գերուսիան 30 հոգուց կազմված ավագների խորհուրդն էր Սպարտայում:
 դ/ Տրիտիան Սպարտայի վարչական տարածքներից էր:
 ե/ Պերիոլոսներն աքայացիների հետնորդներն էին, որոնք ապրում էին պետության կենտրոնական հատվածներում:
 զ/ Դեմոսը տնտեսական, վարչական և ռազմաքաղաքական կախյալ միավոր էր, որն ուներ ընտրովի ղեկավար:
 է/ Աթենական պետության գործադիր իշխանությունը կոչվում էր էկլեսիա:
 ը/ Ատտիկայում երբեք գոյություն չի ունեցել գույքային ցենզ:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
 հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
 պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան